ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ N12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ»

խմբակի ծրագիր

2023-2024 ուստարի

Խմբավար՝ Դիանա Գասպարյան

/ շաբաթական՝ 2 ժ.տարրական խումբ

2 ժ. միջին խումբ

տարեկան՝ 136 ժ./

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ»

Բացատրագիր

«Երաժշտական ներկապնակ» խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով:

Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անունը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում ներկայացված են թեմաներ և երգեր, որոնք նախատեսված են համադպրոցական միջոցառումներ իրականացնելու, աշակերտների ընդհանուր զարգացման և գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, երաժշտական և ստեղծագործական կարողունակությունների և հմտությունների զարգացման վրա:

Խմբակի ծրագիրը նախատեսված է տարրական և միջին դպրոցի տարիքային խմբի աշակերտների համար: Յուրաքանչյուր խմբի հետ նախատեսվում է պարապել շաբաթական երկու ժամ:

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ»

ԾՐԱԳԻՐ

Շրջակա աշխարհը և երաժշտական արհեստանոցը 7 ժամ
Նպատակ
Ծանոթացնել աշակերտներին երաժշտական աշխարհի կարևոր տարրերին և բնութագրիչներին, գործիքներին, որոնցով հնարավոր է ստեղծագործել երաժշտական արհեստանոցում:
Խնդիր
Զարգացնել և ձևավորել երաժշտական արվեստի գեղեցկությունը, բազմաբովանդակությունը և ներդաշնակությունը զգալու կարողունակությունը:
Վերջնարդյունք
Աշակերտները կկարողանան ներկայացնել երաժշտական արհեստանոցի գործիքները, որոնք նպաստում են ստեղծագործելու, ունկնդրելու, վերլուծելու կարողությանը:
1 Բարի գալուստ երաժշտական արհեստանոց: 2 Երգչախումբը և ձայները: 3 Երաժշտական ժամանցի ստեղծում, դիտարկում: 4 Նոտաների ստեղծումից մինչ մեր օրերը: 5 Նոտագրություն: 6 Տևողություն: 7 Ինքնուրույն աշխատանք նոտագրության վերաբերյալ մեդիա տեխնոլոգիայի կիռարմամբ համակարգիչների սենյակում https://www.musicca.com/ru/uprazheniya/noty:
Երգչախումբը երաժշտական արհեստանոցում 9 ժամ
Նպատակ
Ծանոթացնել երգչախմբային կանոններին, խմբերգային ստեղծագործությունը ընթերցելո, վերլուծելու և ճիշտ առոգանությամբ կատարելու ձևերին:
Խնդիր
Ձևավորել խմբերգային ստեղծագործությունը ընթերցելու, վերլուծելու, կատարելու կարողունակությունը:

Զարգացնել լավ առոգանությունը, բառերը ճիշտ արտահայտելու կուլտուրան:
Վերջնարդյունք
Սովորողը կկարողանա ընթերցել, վերլուծել, կատարել խմբերգային ստեղծագործությունը ըստ համապատասխան տեսիտուրայի, մաքուր հնչերանգով, ճիշտ կեցվածքով՝ խմբերգային երգեցողության կանոններին համապատասխան:
8 Ձայնը և իր առանձնահատկությունները: 9 Լադ, տոնայնություն: 10 Չափ: 11 Տեմպը և նրա տեսակները: 12 Ձայնավարժություններ առաջին և երկրորդ օկտավայի սահմաններում սեկվենցիաներով: 13. Ընթերցանություն թերթից նոտաներով երգեցողության միջոցով: 14 -15 «Սեպտեմբերի 1» երգը խոսք.հեղ.՝ Նաթելլա Մաթևոսյան երաժշտ.՝ Եվա Գևորգյանի / ծանոթացում, ունկնդրում, երգեցողություն/: 16 Երգչական ունակություններ՝ շնչառություն, առոգանություն,լարվածք:
Անսամբլը արհեստանոցում 7 ժամ
Նպատակ
Ծանոթացնել անսամբլ հասկածությանը, նրա տեսակներին և առանձնահատկություններին: Սովորել երգել պահպանելով անսամբլի կանոնները: Դաստիարակել սեր և հարգանք Հայրենիքի նկատմամբ:
Խնդիր
Զարգացնել խմբային երգեցողությունը, զարգացնել խմբավարի շարժումները և ժեստերը ճանաչելու կարողունակությունը:
Վերջնարդյունք
Կսովորի երգել խմբով, մաքուր հնչերանգով, նվագակցության ներքո, կամ ակապելլա: Կսովորի զգալ անսամբլը:
17 Մասնակի անսամբլը և նրա առանձնահատկությունները: 18 - 20 «Մեր Հայրենիք» խոսք. հեղ.՝ Միքայել Նալբանդյան երաժշտ.՝ Բարսեղ Կանաչյան: 21-23 «Տոնդ շնորհավոր իմ անկախ Հայաստան» խոսք՝ Սաթի Գևորգյան, երաժշտ.՝ Եվա Գևորգյանի:

Արհեստանոցի մասնակիցները շրջագայում են դասական երաժշտության հետքերով և մասնակցում են հոգևոր քաղաքի և մայրաքաղաքի տոնին 20 ժամ
Նպատակ
Ծանոթացնել հայ և միջազգային դասական հեղինակներին: Մասնավորապես հայ անվանի կոմպոզիտոր՝Վլադիլեն Բալյան (100-ամյակ), ռուս կոմպոզիտոր Միխաիլ Գլինկա (220-ամյակ), Արամ Խաչատրյան 120 ամյակ, գերմանացի կոմպոզիտոր Կրիստոֆ Գլյուկ (310-ամյակ) ստեղծագործական կարողություններին: Ուսուցանել երգեր, որոնք նվիրված են Էջմիածնի և Երևանի տոնին, ուսուցչի տոնին: Դաստիարակել սեր դասական, ազգային, հոգևոր երաժշտության հանդեպ, ուսուցչի դերը և աշխատանքը գնահատելու կարողությունը:
Խնդիր
Զարգացնել դասական երաժշտությունը զգալու և գնահատելու կարողությունը, համաշխարհային մշակույթի ներկայացուցիչներին ճանաչելու կարողությունը: Ձևավորել գեղագիտական ճաշակ: Զարգացնել մաքուր հնչերանգով երգերը կատարելու կարողությունը:
Վերջնարդյունք
Կներկայացնեն հայ և այլ ազգի աշխարհահռչակ կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությունը: Կկատարեն երգեր, նվիրված՝ Էջմիածին և Երևան քաղաքներին, ուսուցչի տոնին: Կերգեն հոգևոր երգեր:
24-25 «Առաջին քայլեր» հեղ.՝Լիանա Հարությունյան: 26-27 «Սիրելի ուսուցիչ» խոսք՝ Ա.Սահակյանի, երաժշտ.՝Ա.Հեքիմյանի 28-29 «Մեսրոպ Մաշտոց» երգի ուսուցում: 30 «Էջմիածին քաղաքի օրհներգը» հեղ. Ավետ Բարսեղյան, Մարինե Մխիթարյան: 31 «Հրաշափառ Աստված»: 32-33 «Եկեղեցին հայկական»: 34-35 «Երևան, Երևան» հեղ.՝ Արմեն Մանդակունյան: 36 «Երևան» հեղ.՝ Էդգար Գյանջումյան: 37 Վլադիլեն Բալյան 100 ամյա տարելից, կյանքը և ստեղծագործական ուղին: 38-39 Միխաիլ Գլինկա 220-ամյա տարելից, կյանքը և ստեղծագործական ուղին:

40-41 Արամ Խաչատրյան 120 ամյա տարելից, կյանքը և ստեղծագործական ուղին «ՄԵԾԱՐՄԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ»: 42-43 Կրիստոֆ Գլյուկ 310-ամյա տարելից, կյանքը և ստեղծագործական ուղին:
Արտահայտչական միջոցների տեսակները և նշանակությունը 7 ժամ
Նպատակ
Ծանոթացնել խմբերգային երգեցողության արտահայտչական միջոցներին, նրանց տեսակներին և նշանակությանը: Ուսուցանել երգեր նվիրված աշնանը և գույներին: Ծանոթացնել երաժշտական նրբերանգների տեսակներին:
Խնդիր
Զարգացնել երաժշտական նրբերանգները տարբերելու, զգալու և հմտորեն կիրառելու կարողունակությունը: Ձևավորել բարձր գեղագիտական ճաշակ: Զարգացնել երաժշտական ստեղծագործության մեջ կենդանի շունչ զգալու կարողությունը:
Վերջնարդյունք
Կկարողանա կատարել երգեր, օգտագործելով երաժշտության: կատարողական արտահայտչական միջոցները / լեգատո, ստակատո, կուլմինացիա/: Կկարողանա կիրառել երգեցողության ժամանակ նրբերանգներ /կայուն և շարժվող, բնական և անբնական/:
44 Լեգատո, ստակատո, նոն լեգատո, կուլմինացիա: 45-46 «Մեր սիրո աշունը» Ռ. Հախվերդյան: 47-48 «Աշուն» Ռ. Հախվերդյան: 49-50 « Գույներ» երաժշտ հեղ.՝Արթուր Գրիգորյան, խոսք՝ Համլետ Առաքելյան:
Ամանորին ընդառաջ 10 ժ.
Նպատակ
Ծանոթացնել ամանորյա, մանկական երգերին և նրանց հեղինակներին:
Խնդիր
Զարգացնել ծիսական երգեր չանաճելու, մաքուր հնչերանգով կատարելու կարողությունը:
Վերջարդյունք

Կսովորեն մանկական, ամանորյա երգեր: Կճանաչեն մանկական երգերի հեղինակներին:
51-52 «Ձմռան երգը» խոսք՝ Վ.Վարդանյանի,երաժշտ.՝ Ս.Նաղդալյանի 53-54 «Ամանոր» խոսք՝ Ա.Շահինյանի, երաժշտ.՝ Ս.Գալիկյան: 55-56 «Happy New Year»: 57-58 «Նոր տարի» Ա.Շահինյանի, երաժշտ.՝ Ս.Գալիկյան: 59-60 «Նոր տարի» հեղ.՝ Ռաֆայել Պատկանյան:
Հայրենիքն իմ տունն է 34 ժամ
Նպատակ
Սովորեցնել աշակերտներին հայրենասիրական երգեր: Սովորեցնել երգեր նվիրված հայոց լեզվին, Հ.Թումանյանի ստեղծագործություններին: Ծանոթացնել Զորավար Անդրանիկի կյանքին և գործունեությանը: Ներկայացնել միջոցառում նվիրված Զորավար Անդրանիկին և հայ ազգի հերոսներին:
Խնդիր
Զարգացնել մաքուր հնչերանգով հայրենասիրական երգեր կատարելու կարողությունները, հայ զորավարներին և հերոսներին ճանաչելու և ներկայացնելու կարողությունները: Դաստիարակել սեր և հարգանք Հայրենիքի, հայոց լեզվի և հայ մշակույթի նկատմամբ:
Վերջնարդյունք
Կերգեն հայրենասիրական երգեր, կներկայացնեն Զորավար Անդրանիկին, Հովհաննես Թումանյանին և հայ զորավարներին: Կներկայացնեն հայ ազգի հերոսներին, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն Հայրենիքի;
61-62 «Հայոց աշխարհ»: 63-64 «Քեզ համար Հայաստան» խոսք՝ Շ.Ազնավուր, երաժշտ.՝ Գ.Կառվարենց: 65-66 «Դարձյալ փայլեց Սասնա գլխին»: 67-68 «Հսկա երկիր էր Հայաստանը մեր»: 69-70 «Ով որ քաջ է»: 71-72 «Խոսեք, Հայաստանի լեռներ» խոսք՝ Հ.Շիրազի: 73-74 «Հայրենիք»: 75-76 «Սարդարապատ» հեղ.՝ Էդգար Հովհաննիսյան: 77-78 «Զքնաղ իմ երկիր Նաիրյան»: 79-80 «Սպարապետ»:

81-82 «Հասնինք Սասուն»:
83-84 «Իմ Հայաստան» խոսք՝ Գ.Բանդուրյանի, երաժշտ.՝
Ջ.Ավագյանի:
85-86 «Հայոց տառեր» խոսք՝ Գ.Բանդուրյանի,երաժշտ.՝
Ալ.Հեքիմյանի:
87-88 «Հայրենիքիս հետ» խոսք՝ Հ.Թումանյան,
երաժշտ.՝Ալ.Հարությունյան:
89-90 «Անդրանիկին» Շերամ:
91-92 «Քաջ Անդրանիկ» հեղ.՝ Համազասպ:
93-94«Անդրանիկ փաշա» հեղ.՝ Հայրիկ:

Արհեստանոցի բնակիչները դիմավորում են գարունը 22 ժամ
Նպատակ
Սովորեցնել մանկական երգեր, մայրության նվիրված երգեր: Սովորոցնել հոգևոր երգեր, շարականներ, որոնք կապված են հայ առաքելական եկեղեցու տոների հետ:
Խնդիր
Զարգացնել բնական ու ճիշտ շնչառությամբ գեղեցիկ երգելու կարողությունը: Զարգացնել հոգևոր շարականները ճիշտ և մաքուր ինտոնացիայով կատարելու կարողությունը: Դաստիարակել սեր և հետաքրքրություն հայ դասական և հոգևոր ծիսական երգերի նկատմամբ:
Վերջնարդյունք
Կսովորի մաքուր հնչերանգով կատարել մանկական և հոգևոր երգեր:
95 «Գարուն է գալիս» երաժշտ.՝ Ա.Հեքիմայն: 96-97 «Մարտի 8-ի նվերը» խոսք.՝ Հ.Օհանյան երաժշտ.՝ Ս.Սամվելյանի: 98-99 «Մայրիկ» հեղ.՝ Սերգեյ Կարինյան: 100-101 «Մայրիկ» հեղ.՝ Գուսան Իգիթ: 102-103 « Մոր սերը» Գուսան Աշոտ: 104-105 « Մոր երգը» խոսք՝ Հ.Պողոսյանի, երաժշտ.՝ Վ.Մելքումյանի: 106-107 «Երազ» խոսք՝ Ս.Շահազիզի: 108-109 «Էջմիածին ի հորէ» շարական: 110-111 «Հրաշափառ» շարական: 112 « Խորհուրդ Մեծ» շարական: 113-114 «Ուրախ լեռ» շարական: 115-116 «Մամա» խոսք և երաժշտ.՝ Ռիչարդ Մադլենյան:

Սուրբ Հարության տոներին ընդառաջ 10 ժամ
Նպատակ
Ծանոթացնել աշակերտներին հայ առաքելական եկեղեցու Սուրբ Հարության տոնին և երգերին: Սովորեցնել մաքուր հնչերանգով երկձայն և ակապելլա կատարել հոգևոր երգեր:
Խնդիր
Զարգացնել հոգևոոր երգերը գեղեցիկ և մաքուր երգելու կարողությունը: Զարգացնել երգելու ընթացքում երաժշտական նրբերանգները զգալու կարողությունը: Զարգացնել հոգևոր երգերը ճիշտ շնչառությամբ կատարելու կարողությունը:
Վերջնարդյունք
Կսովորեն մաքուր հնչերանգով և ճիշտ շնչառությամբ կատարել հոգևոր երգեր: Կներկայացնեն Սուրբ Զատկի խորհուրդը և նշանակությունը:
117-118 «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ»: 119-120 «Անուշ-անուշ» խոսք՝ Հ.Թումանյանի, երաժշտ.՝Հր.Ավետիսյանի: 121-122 «Զնկլիկ» մշ. Հր.Ավետիսյանի: 123-124 «Բարի հրեշտակ» մշ. Հր. Ավետիսյանի: 125-126 «Ուրախացիր Սրբուհի»Մովսես Խորենաացի:
Փառաբանենք հերոսներին 10 ժամ
Նպատակ
Սովորեցնել հայրենասիրական երգեր, ներկայացնել հայրենական պատերազմի զորավարներին և հերոսներին:
Խնդիր
Զարգացնել հայրենասիրական ոգով երգերը կատարելու կարողությունը:
Վերջնարդյունք
Կսովորեն մաքուր հնչերանգով երգել հայրենասիրական երգեր: Կճանաչեն մայիսյան հերոսամարտերում զոհված հերոսներին:
127-128 «Գուսանի ողբը» հեղ.՝ Համազասպ: 129-130 «Հզոր բանակ» խոսք և երժշտ.՝ Է.Սիրունյանի: 131-132 «Հայրենիքիս» խոսք՝ Հ.Վահանյանի, երաժշտ.՝ Կ.Երեմյան:

Սուրբ Հարության տոներին ընդառաջ 10 ժամ
Նպատակ
Ծանոթացնել աշակերտներին հայ առաքելական եկեղեցու Սուրբ Հարության տոնին և երգերին: Սովորեցնել մաքուր հնչերանգով երկձայն և ակապելլա կատարել հոգևոր երգեր:
Խնդիր
Զարգացնել հոգևոոր երգերը գեղեցիկ և մաքուր երգելու կարողությունը: Զարգացնել երգելու ընթացքում երաժշտական նրբերանգները զգալու կարողությունը: Զարգացնել հոգևոր երգերը ճիշտ շնչառությամբ կատարելու կարողությունը:
Վերջնարդյունք
Կսովորեն մաքուր հնչերանգով և ճիշտ շնչառությամբ կատարել հոգևոր երգեր: Կներկայացնեն Սուրբ Զատկի խորհուրդը և նշանակությունը:
117-118 «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ»: 119-120 «Անուշ-անուշ» խոսք՝ Հ.Թումանյանի, երաժշտ.՝Հր.Ավետիսյանի: 121-122 «Զնկլիկ» մշ. Հր.Ավետիսյանի: 123-124 «Բարի հրեշտակ» մշ. Հր. Ավետիսյանի: 125-126 «Ուրախացիր Սրբուհի»Մովսես Խորենացի:
Փառաբանենք հերոսներին 10 ժամ
Նպատակ
Սովորեցնել հայրենասիրական երգեր, ներկայացնել հայրենական պատերազմի զորավարներին և հերոսներին:
Խնդիր
Զարգացնել հայրենասիրական ոգով երգերը կատարելու կարողությունը:
Վերջնարդյունք
Կսովորեն մաքուր հնչերանգով երգել հայրենասիրական երգեր: Կճանաչեն մայիսյան հերոսամարտերում զոհված հերոսներին:
127-128 «Գուսանի ողբը» հեղ.՝ Համազասպ: 129-130 «Հզոր բանակ» խոսք և երժշտ.՝ Է.Սիրունյանի: 131-132 «Հայրենիքիս» խոսք՝ Հ.Վահանյանի, երաժշտ.՝ Կ.Երեմյան:

133-134 «День победы» խոսք.՝Վ.Խարիտոնով, երաժշտ.Բ.Տուխմանով: 135-136 «Երդում հայրենիքին» խոսք՝ Ս.Մուրադյանի, երաժշտ.՝Ռ.Պետրոսյան: Հաշվետու համերգ: